№ 38 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ № 38

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելէֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելէֆօն № 67.

Իշխանուհի ԵԼԻԶԱՎԵՏԱ ԻՎԱՆՈՎՆԱ ԲԷՀԲՈՒԹԵԱՆԸ դուստրներով՝ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը բոլոր ազգականներին, բարեկամներին, ծանօթներին և հիմնարկութիւններին, որոնք թէ անձամբ և թէ նամակներով ու հեռագիրներով արտայայտեցին իրանց ցաւակցութիւնը և յարգեցին յիշատակը ամուսնու և հօր՝

ԻՇԽԱՆ ԱՐՍԷՆ ԻՎԱՆՈՎԻՉ
ԲԷՀԲՈՒԹԵԱՆԻ

150. 1—1

Մարիամ, Վարվառէ, Կլարա, Մկրտիչ և Պօղոս ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆԵՐԸ սրտի ցաւով հաղորդում են ազգականներին և ծանօթներին, որ ամսիս 16-ին, գիշերվայ ժամը 11-ին, երկար հիւանդութիւնից յետոյ, 77 տարեկան հասակում, վախճանվեց իրանց մայրը՝

ԵՂԻՍԱԲԷԹ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՆ

Թաղումը այսօր, ամսիս 19-ին: Յուղարկաւորութիւնը հանգուցեալի բնակարանից (Դիդուբէ, Սազուրամսկայա № 12) ուղղակի դէպի Կուկիայի կաթօլիկաց գերեզմանատունը ցերեկվայ ժամը 12 ին:
144. 1—1

Հայկ Բաբայեանը խորին վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ փետրվ. 1-ին Թիֆլիսի Արամեան հիւանդանոցում վախճանվեց իր սիրելի եղբայր

ՎՌԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ԲԱԲԱՅԵԱՆԸ

Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր, առ. ժամը 10 ին հիւանդանոցից դէպի Խօջիվանքի գերեզմանատունը:
147. 1—1

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

IV ՏԱՐԻ „ԱՐՕՐ“ IV ՏԱՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

1913 թւի համար

ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ ԵՐԿՈՒ ՄԵԾ ԳՐՔԵՐՈՎ—I և II,
ԱՄԵՆ ՄԻՆԸ ԲԱՂԿԱՑԱԾ 50 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ (նաւօրից):

I գիրքը բաղկացած կը լինի գլխաւորապէս ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ, իսկ II գիրքը՝ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններով և դօկումենտներով, լուսաբանված պատկերներով: Բացի դրանից՝ կը տրվի «Հայոց պատմութիւն» կամ «Հայաստան» աշխատութեան շարունակութիւնը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է «Մշակի» բաժանորդների համար 4 ր., ոչ-բաժանորդները վճարում են 2 ր. աւելի: Ամեն մի գիրք առանձին կարժենայ 3 ր.:

—◆ I գիրքը լոյս կը տեսնի յունիսի սկզբին, իսկ II գիրքը՝ հոկտեմբերին: ◆—

Բաժանորդագինը ուղարկել այս հասցէով. Тифлисъ, редакція газеты «Мшакъ», для «Арора». Tiflis, Rédaction du journal «Mschak», pour «Aror». Թիֆլիս, «Մշակ» լրագրի խմբագրութեան, «Արօրի» համար:

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱ Ս. ՍՈՂՕՄՕՆԵԱՆ ԵՒ Ա. ՍԻՒՋՃԵԱՆ

Պատրաստում է կլիշէներ ցինկի, պղնձի, գալվանօ և էմալի: Առանձին ուշադրութիւն է դարձված էմալի կլիշէների վրա, որոնք պահպանում են բնագրի բոլոր նրբութիւնները և ուշ են փչանում: Գործարանում մտցրած է արտասահմանի բոլոր կատարելագործված միջոցները, որ և հնարաւորութիւն է տալիս հարկաւոր դէպքում 3—4 ժամվայ ընթացքում ստանալ բոլորովին պատրաստ կլիշէ: Դասագրքերի և մեծ հրատարակութիւնների համար՝ ամենազգալի զեղչ:
Հասցէն. Пушкинскій пассажъ, Цинкографія Т-ва С. Согомоиянъ и А. Сютчьянъ.
(և.գ.) առ. 142. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷՏԸ

սրանով յայտարարում է, որ, Բանկի կանոնադրութեան § 5-ի համաձայն, Բանկի բացման համար ակցիաների արժէքի առաջին կէս-վճարը գրանցելու համար
40% ՎՃԱՐԸ, ՈՐ ԿԱԶՄՈՒՄ Է 100 ՌՈՒԲԼԻ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱԿՑԻԱՅԻՆ,
պարոնայք բաժնետէրերին աւելի մեծ յարմարութիւն տալու համար, ԴՐԱՄԸ ԿԸՆԴՈՒՆՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷՏԻ ԴԻՒԱՆԱՏԱՆԸ, Բէբուտովսկայա փողոցի վրա Թիֆլիսի Վաճառականական Ընկ. շինութեան մէջ, № 50, որից յետոյ կը մտցվի Պետական Բանկի Թիֆլիսի Գրասենեակը,
ՆԵՐԿԱՅ ՓԵՏՐՎԱՐԻ 11-ԻՑ ՄԻՆՉԵՒ 20-Ը ՆՈՅՆ ԱՄՍԻ:

Յիշեալ 40%-ը մուծելիս անհրաժեշտ է ներկայացնել նաեւ 10% վճարի համար տրված անդորրագիրը, համապատասխան մակագրութիւնների համար, նախքան ժամանակաւոր վկայականի տրվումը:

Օտար քաղաքների բաժնետէրերը յիշեալ վճարումը պիտի կատարեն անմիջական կերպով, փոխադրելով դրամը Պետական Բանկի Թիֆլիսի Գրասենեակը՝ Կազմակերպիչ Կոմիտէտի № 30079 ընթացիկ հաշւին անցկացնելու, կամ թէ ուղարկել Կոմիտէտի նախագահ ԱՐՇԱԿ Ն. ՄԻԼԵԱՆԻ անունով, ընդ որում 10% վճարի համար տրված ժամանակաւոր անդորրագրերը պէտք է միաժամանակ ուղարկել Կազմակերպիչ Կոմիտէտին մակագրելու համար:

Դրամի ընդունելութիւնը առաւօտեան ժամը 10-ից մինչեւ ցերեկվայ ժամը 1½-ը:
84. 2—2

Թիֆլիսի Ժողովարան
Երեքշաբթի, փետրվարի 19 ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ
I
ՄԱՐԻԷՏՏԱ
Կոմէդիա 1 արար.
II
Կրեմոնի վնագործը
պիէս 1 արար.
III
ՎԵՐՕՋԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ
Կոմէդիա 1 արար.
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
Րէժիսսեօր՝ Ա. Արմէնեան:
առ. 146. 1—1

Բ Ժ Ի Շ Կ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը: Հասցէն՝ Բոլշէվսկայա № 1.
առ. (Կ. և. հ.) 4. 100—20

Բ Ժ Ի Շ Կ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի: Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնևմատօրակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սոլոլակ, Բոլշէվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(և. հ. կ.) առ. 746. 100—57

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԵՐԻ և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԵՏԻՒ պրեպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕԹՕՐԱԿՍՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9--1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սոլոլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայա): Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 92. 100—11

Բ Ժ Ի Շ Կ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը:
(երեկ. ժ. 5—7-ը:
Միխայլովսկի պր. 86, տելէֆ. № 576.
(և.հ.և.) առ. 179. 100—94

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը: Վելեամինովսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (ա.օ.մ.) 129. 50—3

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Երեւանսկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.

ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Ողջունում ենք «Արամեան» դպրոցի 60-ամեայ գոյութեան յոբելեանը, որ կատարվում է այսօր Թաւրիզում հանդիսաւորապէս:

Այդ յոբելեանը մի ամբողջ էպօխա է Պարսկաստանի հայութեան կեանքի մէջ, որովհետև Արամեան դպրոցը ստեղծել է մի քանի սերունդներ, որոնց պատուաստել է ազգային ինքնաճանաչութեան գիտակցութիւնը, որովհետև նա ամբողջ 60 տարի լոյս, ուսումն, ազգային և հանրամարդկային կրթութիւն է տարածել թանձր տգիտութեան և խաւարի մէջ ընկղմված Ատրպատականում:

Որքան էլ թոյլ և դողդոջուն են եղել նրա գոյութեան սկզբնական քայլերը, որքան էլ նա չէ կարողացել յաճախ իր կոչումը կատարել ցանկալի կերպով, բայց և այնպէս, հանդիպելով իր շաւղի վրա մեծամեծ խոչընդոտների, տոկուն և անյուսահատ կերպով առաջ է գնացել, և այսօր, 60 ամեայ չարքաշ և դժուարին կեանքից յետոյ, գալիս է տեսնելու այն բազմաթիւ սերունդներին, որոնց կրթել է, որոնց սովորեցրել է մայրենի լեզուն, մայրենի երգը, որոնց հայթայթել է գոյութեան կռուի մէջ դիմանալու հարկաւոր զէնքերը, թէ «օգնեցէք ձեր alma-mater-ին՝ պատրաստել նորանոր սերունդներ և պատրաստել աւելի մեծ հմտութեամբ, աւելի մեծ պաշարով, աւելի մեծ զէնքերով, քան մինչև այսօր է եղել»:

Պարսկաստանը այժմ սկսել է դառնալ միջազգային առևտրական, արդիւնաբերական յարաբերութիւնների և մրցման ասպարէզ: Բնականաբար, մրցման մէջ դիմանալու համար, ասպարէզից յետ չը մղվելու համար, հայերն էլ, որ այդ երկրի վաղեմի տարրերից մինն են կազմում, պէտք է պատրաստված լինեն, կռված և կոփված՝ պատշաճաւոր զէնքերով, իսկ այդ զէնքերը, միջոցները նրանց կարող է տալ միայն դպրոցը, իր կոչման բարձրութեան վրա դրված, լաւ կազմակերպված դպրոցը:

Հետևաբար, «Արամեան» դպրոցը դեռ առաջին դեր և միսիա ունի կատարելու Պարսկաստանի հայութեան կեանքի մէջ. Բայց և այն, ինչ նա կատարել է 60 տարվայ ընթացքում, պարտականութիւն է դնում հայ գիտակից խաւերի վրա համակրութեամբ, յարգանքով ողջունել այսօր նրա յոբելեանը և ցանկալ, որ նա արժանանայ աւելի մեծ փառահեղութեամբ կատարելու իր 100-ամեայ յոբելեանը, աւելի լուսաւոր, պայծառ օրերի մէջ և պարսկահայ ժողովրդի աւելի երջանիկ օրերում:

«Մշակը», որ դեռ իր գոյութեան սկիզբներում, իր գլխաւոր աշխատակիցների՝ Րաֆֆու, Ա. Աֆթանդիլեանի և Հ. Առաքելեանի ձեռքով իր հոգսերի առարկայ էր դարձրել «Արամեան» դպրոցի բարգաւաճման և առաջադիմութեան գործը, հաճոյքով այսօր ողջունում է նրա արդիւնաւէտ և բեղմնաւոր գործունէութեան յոբելեանը, յոյս տածելով որ նրա շնորհիւ կեանքի ասպարէզ կոչված սերունդների ներկայացուցիչները չեն մոռանայ այսօր կատարել իրանց երախտագիտական պարտքը հանդէպ իրանց մայր-դպրոցի:

ԹԱՒՐԻԶԻ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ 60-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Բեռլին, 22 փետրվարի

«Պարսկաստանի Թաւրիզ քաղաքում մի ինչ-որ Արամեան դպրոցի յոբելեան է տօնվում», կը կարդան շատերը հայ թերթերի էջերում, անտարբերութեամբ բարձրացնելով իրանց ուսերը:

Այնքան շատ յոբելեաններ են տօնվում հայկական կեանքում: «Յօբելեան» բառը մեզ մօտ կորցրել է իր իսկական նշանակութիւնը և ծառայում է որպէս պատրուակ միայն նիւթապէս անապահով յոբելեարի օգտին «մուրացկանութեան» ձեռք կարկառելու: Այս կարգի յոբելեաններին չէ պատկանում Թաւրիզի Արամեան դպրոցի 60-ամեայ տարեդարձը, թէպէտ և նիւթապէս նա նոյնքան, գուցէ և աւելի, անապահով է, ինչպէս ամեն մի հայ դպրոց, քիչ բացառութեամբ:

Վեց տասնեակ տարիների մի գոյութեան պատմութիւն է դնում մեր առաջ այդ դպրոցը, որ ասել է՝ թէ Ատրպատականի հայութեան կուլտուրական զարգացման պատմութիւնը: Հայկական դպրոց Պարսկաստանում և 60-ամեայ գործունէութիւն—հեշտ չէ ասել:

Ով որ ծանօթ է այն անթափանցելի խաւարին, որի մէջ խարխափում էր Պարսկաստանը սրանից 60 տարի առաջ, ով մի քիչ գաղափար ունի նոյնիսկ ներկայ՝ «սահմանադրական» Պարսկաստանի կուլտուրական պայմանների մասին (եթէ առհասարակ կուլտուրա խօսքը կարելի է այստեղ գործածել), նա իրօք հիացմունքով պիտի նայի կրթական այդ հաստատութեան վրա:

Տէր Թոդիկեան սիստեմի կլասիք ներկայացուցիչները իրանց փալախկայի և ճիպոտի համար գուցէ ոչ մի տեղ աւելի պարարտ հող չունենալով քան մշուշապատ Իրանում՝ ապատակութիւններ էին սփռում մանուկ սերնդի մտաւոր անդաստանում, բթացնելով սրա միտքն ու հոգին՝ անմարսելի ու անօգուտ սաղմոսներով ու շարականներով:

Մասուրապէս բթացած այդ սերունդը մեռած դիակի էր նմանվում, որին բնական պահանջ դարձած ֆիզիկական շարժումները, ամենաանմեղ խաղերն անգամ արգելվում էին։ Դեռ մինչև այսօր Պարսկաստանում սակաւ չէ այն ընտանիքների թիւը, որ խաղալ և չարութիւն անել խօսքերը հոմանիշ արտայայտութիւններ են համարում։ Հայրս պարծանքով կը յիշէր, թէ ինչպէս մահտեսի Մանուէլ վարժապետը ամենայն օր խուզարկութեան կենթարկէր դպրոց եկող աշակերտներին և նրանց անմեղ ճանները (վէգ) գրպաններից դուրս բերելով հօրը կը նետէր։

Մահտեսի Բաբան դրանով միայն չէր բաւականանում, այլ և խիստ պատժի էր ենթարկում այդ «անկարգ» տղաներին՝ ծեծելով նրանց ձեռքերը իր պատմական դարձած նապաստակի թաթով։

Կրթական այսպիսի անմխիթար պայմանների մէջ 60 տարի սրանից առաջ «Արամեան» դպրոցի հանդէս գալը, անտարակոյս, շատ աւելի խոշոր մի երևոյթ էր, քան մի համալսարանի հիմնարկութիւնը ներկայ Պարսկաստանում՝ շատ աւելի շահաւէտ և նպատակայարմար։

«Արամեան» դպրոցը տասնեակ տարիներ, երբ նա դեռ մրցակից չունէր, միակ միջնակարգ հաստատութիւնն է եղել Ատրպատականում և եթէ կուզենաք՝ ամբողջ Պարսկաստանում, որ կոչված էր այդ խաւար մթնոլորտին հայ ինտելիգենցիա մատակարարելու։ Այդ տեսակէտից բոլորովին իրաւացի է նրա համեմատութիւնը Ներսիսեան դպրոցի հետ։ «Արամեան» դպրոցը պարսկահայ հասարակութեան բոլոր խաւերի համար մարդիկ է մատակարարել, որոնցից շատերը իրանց մտաւոր պաշարով և ընդհանուր զարգացմամբ յետ չեն մնում կովկասեան նման դասընթացով հայ դպրոցների ընթացաւարտներից, իսկ մայրենի լեզուի պաշարով շատ անգամ աւելի բարձր են կանգնած։

«Արամեան» դպրոցի գլխաւոր դերը եղել է ուսուցիչներ մատակարարել Ատրպատականի գաւառներին և աշակերտներ՝ կովկասեան հայ և պետական դպրոցներին։ Այս դպրոցի աշակերտները կովկասեան դպրոցներում միշտ աչքի են ընկել իրանց ընդունակութիւններով և աջողութեամբ և աւարտելով թեմականները, ճեմարանը կամ պետական դպրոցները՝ շատ անգամ բարձրագոյն կրթութեան են նուիրվել։ «Արամեան» դպրոցը նոյնիսկ անմիջապէս ուսանողներ է մատակարարել շվէյցարական համալսարաններին։

Անշուշտ ներկայումս, երբ Պարսկաստանում արդէն նման հաստատութիւններ գոյութիւն ունեն, «Արամեան» դպրոցն իր կրթական մակարդակով չէ կարող ունենալ այն խոշոր նշանակութիւնը, ինչ նա առաջ ունէր. սակայն ներկայ յոբելեանը մի վերագնահատման ակտ է այս դպրոցի անցած բեղմնաւոր գոյութեան, հետևապէս և մեծ խրախուսանքի արժանի։

Ծերացել է «Արամեանը»՝ խնամատար մօր գուրգուրանքով փայփայելով բազմաթիւ սաներին, որոնք այժմ ցրված են հասարակական զանազան ասպարէզներում։ Թող ամէնքը յիշեն իրանց կրթական օրրանը և բարոյական պարտականութիւն զգան երախտագէտ լինելու պատկառելի յոբելեարին, յատկապէս նրանք, ովքեր նիւթական բարեկեցիկ վիճակի մէջ են գտնվում, կամ հասարակական դիրք են վայելում։ Մեզ ծանօթ են Պարսկաստանից դուրս և Պարսկաստանում բազմաթիւ հայ առևտրականներ, որոնք որպէս «Արամեանի» նախկին սաներ՝ կարող են ապահովեցնել այդ հաստատութիւնը, եթէ չէ մեռել նրանց մէջ երախտագիտական զգացմունքը դէպի այդ բազմարդիւն՝ առաջին կրթական ֆակտորը Իրանի խաւար աշխարհում։

Դոքտ. Ա. Շահբազեան

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Թիֆլիսից հետևեալ շնորհաւորական հեռագրերն ուղարկվեցին երէկ, փետրվարի 18-ին, Թաւրիզ, յոբելեանական յանձնաժողովի նախագահ Զաք. Նազարբէկեանի անունով։

I

«Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնները ջերմագինս ողջունում են Արամեան դպրոցի 60-ամեայ նշանաւոր յոբելեանի տօնախմբութիւնը։

II

Անկեղծօրէն շնորհաւորում ենք պատմական փառաւոր յոբելեանը 60-ամեայ գոյութեան Արամեան դպրոցի, որ եղել է լուսաւորութեան ռահվիրան պարսկահայերի մէջ։ Թող ծաղկէ նա երկար տարիներ, տարածելով լոյս, ուսումն պարսկահայերի մէջ։

Ալ. Մելիք-Ազարեան, իշխանուհի Մարիամ Թումանեան, Համբ. Առաքելեան, Ս. Յարութիւնեան, տ. Հ. Առատամեան, իշխ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկ, Ս. Սուլխանեան, Մ. Սուլխանեան։

«Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը Արամեան դպրոցի յոբելեանական յանձնաժողովի նախագահ Զ. Նազարբէկեանի հասցէով հետևեալ ուղերձն է ուղարկել.

«Յոբելեար Արամեան դպրոցին։

«Աղբիւրն» ու «Տարազը» ջերմ ողջունելով Ատրպատականի հայերի լուսաւորութեան Արամեան դպրոցի 60-ամեակը և սրտագինս մաղթելով Արամեան դպրոցիդ յարատև, բարգաւաճ ու փայլուն գոյութիւն՝ այսու հրապարակով յայտնում են, որ տասնեակ տարիների ընթացքում, թէև հեռուից, գիտենալով Արամեան դպրոցիդ սաների ընդհանուր զարգացումը, մայրենի լեզուին քաջ տիրապետելը, խորին համոզումով եկել են այն եզրակացութեան, որ պարսկահայը գիտակցաբար տենչում է քաղաքակրթութեան շաւիղներ գտնել։

«Ողջոյն Արամեան դպրոցիդ, որ աղջամուղջի մէջ իսկ՝ 60 տարիներ կանգուն սփռում է շուրջը լոյս, ջերմացնում և աճեցնում զուարթ ու կենսունակ բողբոջներ։

«Յարգանք Արամեան դպրոցիդ բազմերախտ աշխատաւորներին»։

ՅԳՆՈՒՏ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՖՈՆԴԻ

Ինչպէս յայտնեցինք, («Մշակ» № 36) մենք սկսեցինք ստանալ նուէրներ Թաւրիզի Արամեան դպրոցի ֆոնդի։

Ահա մեր ստացած նուէրների ցուցակը։

Թիֆլիսում. 1) Ալ. Մելիք-Ազարեան 500 ր., 2) Ս. Յարութիւնեան 25 ր., 3) իշխ. Մ. Թումանեան 10 ր., 4) իշխ. Ս. Արղութեան-Երկայնաբազուկ 5 ր., 5) Գ. Կաֆեան 10 ր., 6) Ն. Բուդաղեան 10 ր., 7) տ. Մխիթարեան 5 ր., 8) տ. Հ. Առատամեան 5 ր., 9) Հ. Առաքելեան 15 ր., 10) տ. Վ. Յովհաննիսեան 3 ր., 11) տ. Ն. Շահնազարեան 5 ր., 12) տ. Փ. Մելիք-Սարգսեան 5 ր., 13) տ. Ս. Բաբայեան 5 ր., 14) տ. Ժամհարեան 3 ր., 15) տ. Եսայեան 3 ր., 16) Նովօրոսսիյսկից, Մ. Մարիմեանից 5 ր.։

Ընդամենը 614 ր.։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 և 17 փետրվարի

Պետերբուրգ.—Բուխարական էմիրն ընդունվեց Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնայից։

Սոֆիա.—Սիլիստրիայի ազատագրութեան 35-ամեակի առիթով քաղաքապետը ազգաբնակութեան անունից դիմեց Թագաւոր Կայսրին, նաև արտաքին գործերի մինիստրներ Սազոնովին և Գրէյին հեռագիրներով և ջերմ դարձուածքներով խնդրում է աջակցութիւն, որովհետև վտանգ է սպառնում, որ Սիլիստրիան կանցնէ Ռումինիայի իշխանութեան ներքոյ։

Կ. Պոլիս.—Ոստիկանութիւնը խուզարկութիւններ կատարեց սուլթանի եղբայրների և զինւորական լիգային պատկանող միւս բարձրաստիճան զինւորական անձանց տներում։ Կատարվեցին ձերբակալութիւններ։

Կ. Պոլիս.—Հրատարակվեց պաշտօնական հաղորդագրութիւն դաւադրութիւն երևան հանելու մասին։ Կառավարութիւնը, տեղեկութիւններ ստանալով այդ դաւադրութեան մասին, ձերբակալեց գլխաւոր դրդիչներին։ Դաւադիրները մտադիր էին միտինգ կայացնել Բ. Դրան մօտ, գնալ սուլթանի մօտ և խնդրել նրանից հրաժարեցնել ու դատարանին յանձնել ներկայ կաբինէտի անդամներին։ Նախագծված էր կալանաւորել մինիստրներին և նրանց կողմնակիցներին և արտաքսել բոլորին Կ. Պոլսից։ Տպված էր 5000 կոչ յանուն զօրքի և նաւատորմի։ Ձերբակալվածները յանձնվելու են զինւորական դատարանին։

Տրիէստ.—Ալբանական կոնգրէսի ցերեկվայ նիստում ընտրվեց պրեզիդիում։ Փոխ-նախագահ Ֆաիկ-բէյ Կոնիցան շնորհակալութիւն յայտնեց աւստրիական կայսրին և իտալական թագաւորին Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի դէպի ալբան ժողովուրդը տածած բարեացակամութեան համար, որպիսի հանգամանքը հնարաւոր դարձրեց յայտարարել Ալբանիան աւտոնոմ երկիր։

Այսօր առաւօտ կոնգրէսը լսեց իտալական արտաքին գործերի մինիստրի հեռագիրը, որի մէջ մինիստրը Ալբանիայի ազատութիւնն ու բարգաւաճումն է ցանկանում։

Աթէնք.—Ռօդոսից հաղորդում են, որ գիւղացիներին շարունակում են բանտարկել. արտաքսված են մի քանի յոյներ, ի թիւս որոց գլխաւոր քաղաքագլուխը և վարչութեան երկու անդամները։ Իտալական իշխանութիւնների գործողութիւնները ծանր տպաւորութիւն են թողնում քաղաքի մէջ։ Տրամադրութիւնը ճնշված է։

Տրիպոլիս.—Փետրվարի 15-ին մի քանի հարիւր ապստամբներ յարձակվեցին Բուազիլ բերդի վրա, բայց յետ մղվեցին իտալացիներից մեծ կորուստներով։ Իտալացիք կորցրին մի սպանված ու մի վիրաւոր։

Թէհրան. — Պետական գանձարանը համարեա դատարկվել է։ Իսէ թէ ռոճիկ չը ստացած պաշտօնեաները գործադուլ անեն։

Բելգրադ.—Գեներալ Պապրիկօվը մեկնում է Ուսկիւբ սերբիական գահաժառանգի մօտ։

Տրիէստ.—Բացվեց ալբանական կոնգրէսը Ալբանիայի և արտասահմանեան ալբան գաղութների աւելի քան 100 ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Վիլհէլմսհաֆէն.—Ծով իջեցրին նոր հսկայ դրէդնօուտ «Կէնիգ»։

Լոնդոն.—Սուֆրաժիստուհիները Մոնուտշիրում մեծ իրարանցում առաջ բերին այն պատճառով, որ կեղծ հեռագրով կարգադրել էին ոստիկանութեան ժողովել ցամաքային զօրքի տեղական մասերին։

Տոկիօ.—Պարլամենտի բիւջէտային մասնաժողովի մէջ արտաքին գործերի մինիստրը արտաքին քաղաքականութեան հարցի առիթով յայտնեց, որ Չինաստանի ամբողջութեան սկզբունքը չէ խախտված։ Անգլիան պնդում է միայն գործադրել Տիբէթի մասին գոյութիւն ունեցող պայմանագրերը, Ռուսաստանը պահանջում է ճանաչել Մոնղոլիայի աւտոնոմիան։

Տոկիօ.—Պրէմիերը և զինւորական մինիստրը բիւջետային մասնաժողովի մէջ յայտնեցին, որ այս տարի գումարներ կը յատկացվի երկու զօրաբանակ կազմելու Կորէայում։

Ուրգա.—Մոնղոլական կառավարութեան տեղեկութիւնների համաձայն Կոբդոյի շրջանում չինական զօրքերի կազմը ուժեղացված է։ Պատրաստված են շատ ռազմամթերքներ։

Յունան. — Նանգամում ապստամբութիւնը վերջացաւ։ Դաշտային դատարանը հրացանազարկ արեց 34 ապստամբի. մնացածները փախան Մուկդէնի նահանգը։ Լուրերի համաձայն՝ Գիրինի նահանգի արևելեան մասում զօրքերի մէջ յուզմունք է։ Իշխանութիւնները կազմակերպում են չինական կամաւոր զօրախմբեր և բնակիչներին վաճառում են Գիրինից ստացված մաուզերները։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 և 17 փետրվարի

Բերլին.—Հեղինակաւոր տեղեկութիւնների համաձայն՝ Թիւրքիան պատրաստ է ընդունել մեծ պետութիւնների միջնորդութիւնը հաշտութեան մասին։ Եւրոպական դիւանագիտութեան հերթական խնդիր հանդիսանում է այդ տեսակ յայտարարութիւն ստանալ նաև բալկանեան դաշնակցութեան կողմից։

Պարիզ.—Դիւանագիտական շրջաններում հաստատում են այն տեղեկութիւնը, որ Թիւրքիան դիմել է մեծ պետութիւններին միջնորդութիւն խնդրելով։

Լոնդոն.—Րէյտէրի տեղեկութիւնների համաձայն Կ. Պոլսում կայացած նոր վճիռների պատճառով սպասվում է, որ Բ. Դուռը ընդունէ մեծ պետութիւնների հաւաքական նօտան։ Եթէ օսմանեան պատասխանը բաւարար երևայ, որ սպասում են հաւատով, մեծ պետութիւնները իրազեկ կը լինեն՝ թէ համաձայն են, արդեօք, դաշնակիցները Եւրոպայի միջնորդութեանը, թէ ոչ։ Րէյտէրի տեղեկութիւններից երևում է, որ պատերազմից բղխող բոլոր ֆինանսական հարցերը կը հարթէ Պարիզում արտաքին գործերի մինիստրութեանը կից կազմված տեխնիկական մասնաժողովը։ Սպասում են, որ մեծ պետութիւնները այդ մասնաժողովի մէջ կը նշանակեն նաև իրանց ներկայացուցիչներին։

Բերլին.—«Նորդ-Դոյտշէ-Ալգ.-Ցայտունգը» գոհունակութիւն է յայտնում այն առիթով, որ Թիւրքիան պատրաստ է ընդունել մեծ պետութիւնների միջնորդութիւնը և յոյս է արտայայտում, թէ բալկանեան կառավարութիւնները կը վստահեն մեծ պետութիւններին։ Եթէ աջօղվի հաշտութեան բանակցութիւնները հասցնել մինչև իրանց վախճանին, այն դէպքում դիպլօմատիայի այդ միահամուռ աշխատանքից կարելի է սպասել նըպաստաւոր ազդեցութիւն այն մտքով, որ մեծ պետութիւնները հնարաւորութիւն կունենան լուծել իրանց սեփական շահերին վերաբերող խնդիրները։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

16 և 17 փետրվարի

Բուխարեստ.—Կ. Պոլսից հեռագրում են, որ ամեն օր թարմ զօրքեր են գալիս Անատոլիայից և մեկնում են Չաթալջա։

Էնվէր-բէյի հրամանատարութեան տակ գտնվող զօրամասը, որ ափ էր իջնելու Ռօդօստօյում, վերադարձաւ կրկին Կ. Պոլիս՝ չիրագործելով իր նպատակը։

Աթէնք.—Ֆիլիպիադիայից հեռագրում են, որ Եանինայից դէպի հիւսիս՝ Մոլիստայիմ օտերը տեղի ունեցաւ 6 ժամ շարունակ տևող կատաղի կռիւ յոյների և ժեղ թիւրքաց զօրամասի միջև։ Թիւրքերը բոլորովին ջարդվեցին և դիմեցին փախուստի կորցնելով 180 գերիներ։ Թիւրքերը փորձեցին երկրորդ անգամ յարձակման դիմել, բայց նորից պարտվեցին։ Յոյների կորուստներն աննշան են։

Լոնդոն.—Սկիւտարի հարցի առիթով մամուլում երևցած բալկանեան դաշնակիցների պատգամաւորների յայտարարութիւնը անգլիական հասարակական կարծիքի վրա թողեց անհաճելի տպաւորութիւն իր անհաշտարար ոգով։

Պարիզ.—Վերջին տեղեկութիւնների համեմատ, հազիւ թէ կարելի է յուսալ, թէ Սկիւտարը կընկնի։ Բարդանիօլում, վերջին գրոհի ժամանակ, չեռնօգորցիք փրկվեցին միայն շնորհիւ Բրդիցայի կողմից եկած սերբերի միջամտութեան. չեռնօգորցիք՝ չը հայած 3-օրեայ կատաղի կռւին՝ գրաւեցին սոսկ Բարդանիօլի բարձունքների արևելեան մասը և երկու աննշան դիրք Տարաբօշում, սակայն դրա դիմաց ունեցան 1,500 սպանված և 3,500 վիրաւոր։ Չեռնօգորական արտիլերիան սպառել է ռազմամթերքի պաշարը։ Հանգստութիւնը բացատրվում է պաշարողների անզօրութեամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

«Баку» լրագրի թղթակիցը հեռագրում է Թէհրանից.

«Հայկական ազգային խորհուրդը Պարսկաստանում պատասխան ստացաւ Պետերբուրգից այն միջնորդութեան դիմաց, որով խնդրվում էր Ռուսաստանից միջամտել թիւրքահայերի համար։

«Ռուսաց կառավարութիւնը յայտնում է, որ թիւրքահայերի պաշտպանութիւնը միշտ եղել է Ռուսաստանի հերթական խնդիրներից մինը և հարկաւոր րոպէին նա ամեն հնարաւորը կը գործադրէ հայերի դրութիւնը բարելաւելու և նրանցով բնակված նահանգներում բարենորոգումներ մտցնելու համար»։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Բաղչէ (Կիլիկիա), 6 յունվարի

Վերջերս մի քանի աւազակներ գիշերով մտան հանգուցեալ Ասատուրի և Յակոբի տները և բռնաբարելով յիշեալների կանանց՝ փախան։ Մինչև այժմ կառավարիչը նրանց չէ ձերբակալել։ Յիշեալը միւսիւլմաններին գրգռում է քրիստոնեաների դէմ, և այդ իսկ պատճառով աւազակները աւելի ու աւելի սիրտ են առնում և բազմաթիւ չարագործութիւններ են կատարում։ Մեր շրջանի հայ բնակչութիւնը (800 տուն) վտանգի մէջ է։

Քէմախ, 28 դեկտեմբերի

Երզրումի և Սըվազի շրջաններում թալանները և բռնի գրաւումները վերջ չունեն։ Աւազակների մի խումբ գիւղից գիւղ է յարձակվում, կողոպտում է բոլորին և տեղական ծանօթ անձնաւորութիւնները առևանգում։

Թօքաթ, 31 դեկտեմբերի

Չիլէլի Հասան կոչված թիւրք ոստիկանը, որ շարունակ ամեն տեսակ անիրաւութիւններ է կատարում և կռիւների ու անբարոյական արարմունքների պատճառ դառնում, և մի երկու օր առաջ հայ քահանայի ապակիները ջարդեց նրան վախեցնելու համար, և հրապարակով հայոց ազգութեանն ու կրօնին հայհոյեց, միշտ մնում է պաշտօնի մէջ և վայելում է միւթէսարրըֆի (կառավարիչ) ջերմ պաշտպանութիւնը։

Տէնօս (Սըվազ), 10 յունվարի

Մի հարկահաւաք եկաւ մեր գիւղը մի քանի ոստիկաններով, և գիւղացիների ուտեստեղէնը և անասունները բռնի ծախել տալուց յետոյ՝ նրանց ծեծի, տանջանքների և նախատինքների ենթարկեց։

Բէքիր Չավուշ, ոստիկանների հրամանատարը, պահապան Ահմէդ և քսան զինւորներ ու բաշիբօզուկներ քանիցս յարձակվեցին մեր գիւղի վրա փախստական զինւորներ փնտռելու պատրուակով. բռնի մտան յիշեալների տները և զէնքի սպառնալիքի տակ ստիպեցին խեղճերին ցուրտ ու ձիւնալի գիշերով դուրս գալ իրանց տներից, ենթարկեցին տանջանքների, և նրանց պաշարները և կենդանիների խոտերը այրեցին, ջարդեցին ինչ որ իրանց ձեռքի տակ էր ընկնում, նախատեցին հայ կրօնն և ազգութիւնը և Պապիկեան Զատիկին ձերբակալելով անխղճօրէն ծեծեցին սպանելու նպատակով, յետոյ վիրաւորված վիճակի մէջ՝ բանտարկեցին նրան և անօթի, ծարաւ պահելով տանջանքների ենթարկեցին։ Այս բոլոր չարագործութիւններից յետոյ սկսեցին աղաղակել. «Թող այժմ ռուսները գան և ձեզ ազատեն»։

Այս դէպքերին ականատես կառավարական պաշտօնեաները ոչինչ չեն անում չարագործներին ձերբակալելու համար, որի հետևանքով մեր կեանքը վտանգի տակ է։ Այս բոլոր մեր պատմածների մէջ ոչ մի չափազանցութիւն չը կայ. ընդհակառակը, իրականութիւնից աւելի քիչ է ասված։ Եթէ ստուգելու ժամանակ հերքվեն այս տեղեկութիւնները, պահանջում ենք, որ մի մասնաւոր քննիչ ղրկվի այստեղ, արդարութիւնը երևան հանելու և մեր իրաւունքները պաշտպանելու համար։

Ակն, 4 յունվարի

Ամսիս 1-ին, ժամը 11-ին, 7—8 թիւրք ոստիկաններ Յովհաննէս անունով 19 տարեկան մի հայ երիտասարդի վրա յարձակվեցին և սկսեցին ծեծել նրան։ Երիտասարդը փորձեց ապաստանել կառավարութեան շէնքի մէջ, բայց ոստիկանները շարունակեցին հետևել և ծեծել նրան հէնց կառավարութեան շէնքի առաջ՝ ի ներկայութեան տեղւոյս բնակչութեան։

Բայազէտ, 11 յունվարի

Այս ամսի ընթացքում երկու հայեր սպանվեցին—մէկը՝ Արզապ գիւղից Մարտիրոսը, միւսը՝ բայազէտցի Յովակիմը—Հերբէսօր կոչված քիւրդ գիւղի մօտ։ Բայազէտում Իսմայիլ և Մըօ անունով քիւրդ աւազակները գիշերով կողոպտեցին Մովսէս Մինասեանի խանութը։

Մուշ, 23 յունվարի

Բօչանի ոստիկանների հրամանատարը երէկ գիշերով ժամը 6-ին մտաւ Արմենակ Մարթաեանի տունը, առանց որևէ պատճառի՝ բռնի ձերբակալեց և բանտարկեց նրան։ Նոյն գիշերը ժամը 11-ին Արմենակին կառավարական շէնքի վերին յարկն են տանում և տանը մաուզէր հրացանի կաշիով կապելով՝ մեռցնելու աստիճան խաբաղանում են և ուշաթափված վիճակի մէջ գցում են կառավարական շէնքի բակը։ Արշալոյսին մի ոստիկան և մի պահապան նկատելով նրան՝ փոխադրում են տուն անյոյս դրութեան մէջ։

Հաճըն, 22 յունվարի

Փախստականների և զօրքերի միջև տեղի ունեցած ընդհարումից յետոյ, առաջիններն ապաստանում են գորգի և գուլպայի գործարաններ, որբանոցի և Թէքրղեանի տան մէջ։ Զինւորները պաշարում են այս շէնքերը և սկսում են հրացան արձակել, որից հրդեհ է առաջ գալիս։ Շէնքերը այրվում են. վնասները խոշոր են։

Գորգի գործարանի արժէքը		500	օսմ. ոսկի
Գուլպայի	»	500	» »
Որբանոցի շէնքի	»	500	» »
Ուսուցչուհիների բնակ.	»	250	» »
Թէքրղեանի տան	»	3500	» »
Ընդամենը		4750	օսմ. ոսկի

Այդ գործարանների մէջ աշխատող այրի կանայք այժմ անգործ են մնացած, իսկ որբերը անպատսպար և առանց սնունդի։

Խնդրում ենք անմիջական օգնութիւն հասցնել։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

I

Վան, 31 յունվարի

Դարձեալ օրինակներ եմ առաջ բերում ապացուցանելու համար, թէ թիւրք կառավարութիւնը ինչ կերպ է լուծում հայկական հարցը մի այնպիսի ժամանակ, երբ հարցը արծարծվում է Եւրոպայում, իսկ Կ. Պոլսում մինիստրների խորհուրդը ռեֆորմների ծրագիրներ է մշակում։

Յիշվում է, որ սրանից մօտ երեք տարի առաջ աւազակ Միր-Մհէի գործակիցներից ու նրա չափ անհրկու աւազակներից Կալէ ու Ջահֆէր անուն երկու քիւրդ եղբայրները Պարսկաստանում ձերբակալվեցին մի վանեցի հայի շնորհիւ, որ Թիւրքական հիւպատոսարանի պաշտօնակատար էր Սալմաստում, և բերվեցին Վան. այլապէս անհնարին էր նրանց ձերբակալումը, ինչպէս որ միւս աւազակներից ոչ մէկը չը ձերբակալվեց, որովհետև հրաման չէ եղել ձերբակալելու, ինչպէս որ շատ անգամ օրինակներով ապացուցել ենք։ Ուստի մնում էր կալանաւորվելուց յետոյ նրանց մի կերպ ազատել բանտից. ահա գործ են դրվում այլևայլ հնարներ. Միր-Մհէն յայտնի համարձակ սպառնում է հայերին, թէ ով որ համարձակվի դատարանում վկայել Կաղէրի, Ջահֆէրի ու Միր-Մհէի հայր Ամարի մասին, որ նոյնպէս բանտումն է գտնվում, իր կեանքովը տուժելու է. ուստի հայերը չեն համարձակվում դատարան գալ ու ճշմարտութիւնը վկայել. իսկ նրանք, որ գալիս են, ասում են՝ «չը գիտենք, չենք ճանաչում» և այլն, չը նայելով որ նրանք էին կանգնած գիւղում եօթն հայերի մորթողները և ուրիշ շատ սպանութիւններ ու չարիքներ գործողները. մինչև անգամ մի ժանդարմական օֆիցէրի, որին իր ոստիկաններով մի յարդանոցում փակել էին ու կրակ տալով ողջ-ողջ այրել էին ուզեցել և որ օֆիցէրը իր պաշտօնական ժուռնալով յայտնել էր կառավարութեանը քիւրդերի միջամտութեամբ ազատվելուց յետոյ, նոյն այդ օֆիցէրը վկայութեան կանչվելիս ուրացաւ ճշմարտութիւնը, ասելով որ Կաղէրին, Ջահֆէրին չի տեսել, այլ միայն կարծել է, թէ նրանք են եղել յարդանոցի կրակ տուողները։

Այսպիսի դատավարութեամբ, կասկած չը կար, Կաղէրն ու Ջահֆէրը պէտք է արդարանային, ինչպէս արդարացրին Շաքիրին, և եթէ մինչև այսօր յապաղում էր և երկարացվում նրանց բանտարկութիւնը, մտքերը պատրաստելու նպատակով էր միայն։ Բայց սրանց արձակումը բացարձակ բան պէտք է լինէր. դատաւորները տեսան, որ Շաքիրի արձակումն անգամ պատճառ դարձաւ խօսակցութեան ու մինչև անգամ պատրիարքարանի կողմից բողոքի, ուստի մտածեցին մի ուրիշ հնարք. դատը փոխադրել տալ Բաղէշ և այնտեղ նրանց արդարացնել. արդիւնքը միևնոյն է. միայն թէ իրանք՝ Վանի դատաւորները այդ պատասխանատու քայլը իրանցից հեռացնում են. իսկ Բաղէշում նրանց արդարացնելը շատ հեշտ կը լինի, որովհետև այնտեղ քիւրդերի ազդեցութիւնը շատ աւելի զօրաւոր է, հայերը աւելի նկուն են, ուստի բողոքների տեղիք չի տայ։

Ահա արդարութիւնը այս կերպով են գործադրում Թիւրքահայաստանում. հռչակաւոր աւազակ Շաքիրին արդարացրին, արդարացնել են փորձում Կաղէրին և Ջահֆէրին, նոյնպէս Միր-Մհէի հօրը՝ Ամարին. և եթէ մի Միր-Մհէ կամ Սահիդ էլ մի օր ձեռք ընկնեն ակամայ, տարակոյս չը կայ, որ նրանց էլ կամ կը ներեն և կամ արդարացնելու համար մի ճար էլ նրանց կը գտնեն։ Միթէ այդ նպատակով չէր, որ Մատթէոս քահանայի և ուսուցիչ Ռաֆայէլի սպանութեան դատն էլ փոխադրեցին Բաղէշ. այնտեղ Սայիդ-Ալիի ազդեցութիւնը զօրաւոր է, վալիի որդին նրա հետ որսի է գնում, և որովհետև սպանութիւնը եղել է նրա հրամանով ու ձերբակալված մի քանի քիւրդերն էլ նրա պաշտպանողներն են, ուստի Բաղէշում նա հնարը կը գտնէ նրանց էլ մի կերպ արդարացնելու, եթէ ոչ՝ ուրիշ պատճառ չը կար դատի փոխադրութեան, թողնենք որ նախապէս ձերբակալված 23 քիւրդերը, որոնց ձերբակալումը վալի Իզզէթ բէյը պարծանքով հեռագրել էր Կ. Պոլիս, Ոստանի բանտից արդէն արձակվեցին դատավարութեան հիմք չը լինելու վճռով, թէև Մատթէոս քահանայի և ուսուցիչ Ռաֆայէլի սպանութիւնը տեղի էր ունեցել Կարկառ և Ծովու գիւղերի քիւրդ բնակիչների միահամուռ գրոհով։

Սրա հակառակ հաջի Եազուբի և ընկերների սպանութեան խնդրով ձերբակալվել են Խրօրգենց գիւղացի 14 հայեր, որոնք նոյն սպանութեան գործում մասնակցութիւն չեն ունեցել, իսկ 18 հայերի էլ հետապնդում են, որոնցից մէկը նոյնիսկ գիւղի քահանան է և որոնք այժմ փախստական են դարձել. այս կերպով, այսինքն ոմանց ձերբակալելով, իսկ շատերի էլ փախուստով Խրօրգենց գիւղը դարձել է այրերից թափուր մի գիւղ. գիւղում մնում են միայն կին ու երեխաներ, թէև կառավարութեան շատ լաւ յայտնի է, որ հաջի Եազուբի ու ընկերների սպանողները Խրօրգենց գիւղացիները չեն և եթէ սպանութիւնը նրանց գիւղումն է պատահել, այդ եղել է նրանց կամքից անկախ, իսկ Թիւրք կառավարողներին հայը պատժել պէտք է, միևնոյն է թէ սա մեղաւո՞ր է թէ անմեղ. իսկ բնաւ հոգ էլ չեն անում, որ այդ անարդար պատժով մի հայ գիւղ կործանվում է. չէ՞ որ մի հաջի Եազուբի սպանութեան վրէժն է լուծվում, և հայերը մի ուրիշ անգամ էլ չեն համարձակվի վրէժխնդրական ակտի դիմել քիւրդ չարագործների դէմ։

Մտրակ

II

Խոտորջուր (Երզր. նահ.), 10 փետրուար

Այստեղ յամառօրէն լուր կը շրջի, թէ օսմ. զինուորական նախկին մինիստր՝ ըսպանուած Նազըմ-փաշայի վրէժը չէրքէզ մը պիտի լուծէ, ինչպէս սուլթան Ազիզի վրէժը լուծեց չէրքէզ Հասան։ «Իթթիհադ վէ Թէրաքքըի» նշանաւոր անդամներէն պիտի զարնեն, որոնց մէջ են Շէվքէթ-փաշա, Էնվէր-բէյ։ Թիւրքերը առ այժմ չորս մասի են բաժնուած. 1) Համիդականները, այսինքն բոլոր կրօնամոլները, խօջաները և քիւրդերը. 2) Նազըմ-փաշայի կողմնակիցները, որ զօրաց կէս մասը կը կազմէ, ինչպէս և չէրքէզները և առնաուտները. 3) Իթթիհադականները և 4) Իթիլաֆականները։

Եթէ Օսմ. Հայաստանի հայութեան ակնկալութիւնները այս անգամ ալ երազ մնալու դատապարտուին, այն ժամանակ շրջանիս հայ ժողովուրդը որոշած է գաղթել, որովհետև ալ ուրիշ միջոց չկայ մարդավայել ապրելու։

Զինուորագրութեան համար չարաչար կը նեղեն բոլոր հայ գիւղերը, բայց ոչ թէ զինուոր տանելու համար, ոչ. այլ դրամ շորթելու։ Շաբաթն անգամ մը՝ մէկ խումբ կուգայ։ Զայն կը գոհացնեն ուզածը տալով, և ահա 10 օր վերջ ուրիշ խումբ մը կուգայ. անոր ալ կուտան, այն ալ կերթայ, 5 օր չանցնիր՝ զապթիէներ և ժանդարմներ կուգան։ Եւ այսպէս՝ խեղճ ու անոք ժողովուրդը պարտաւոր է ամենուն ալ գոհացում տալ։

Վաշապ

ՕՏՏՕՄԱՆՆԵՐԻ ՆԵՆԳԱՄԻՏ ՆՊԱՏԱԿԸ

Նոր չէ, այլ հին և սիստեմատիկ քաղաքականութիւն է, որ օսմանցիները մտածել են դեռ երկար տարիներ առաջ՝ իրանց արբանեակ քիւրդերի միջոցով կեղեքել, հալածել և սպանել հայ տարրը, հանել խոչընդոտներ նրա առաջադիմութեան դէմ, Բալկանից արտագաղթած մուհաջիրներին՝ հայերից թողնված հողերի վրա զետեղել և մի աւելի հրէշաւոր տարր փաթաթել մնացածների գլխին։

Սրտաճմլիկ և մորմոքիչ են այն տեղեկութիւնները և լուրերը, որոնք օրէ-օր տպվում են մեր և օտար պարբերական թերթերում, հասած Թիւրքահայաստանի այս և այն կողմերից։ Սրանց մէջ աւելի մեծ տեղ են բռնում Վասպուրականի (Վանի) հարաւային գաւառներում (Մոկաց, Շատախի, Հիզանի, Կարկառի և շրջակայից) տեղի ունեցած աւելի բարդ ոճրագործութիւնները։

Ահա մի լայնատարած շրջան, որը ամբողջապէս ընկճված է յայտնի ոճրագործ Շէյխ Ջէլալէդդինի յաջորդ Սէիդ Ալիի անսահման կամայականութեան և բարբարոս ֆանատիկոսութեան տակ։

Թիւրքերը իրանց հերթին, իսկ կառավարութիւնը իր հերթին թալանում, տանջում և սպանում են որոշ նպատակով՝ արտահանելու հային իր բնակավայրից։

Չարիքը նիւթ է առնում վերևից, նենգամիտ քաղաքականութեան խարդախ ձևականութիւնից։ Բ. Դուռը կակուղ բարձ է դնում մեր և եւրօպական քաղաքագէտների գլխին, խոստանում է, ծրագրում է բարենորոգումներ մտցնել, բայց միւս կողմից իր քիւրդ արբանեակներին այլ կերպ է հրահանգում...

30—35 տարի է, որ լսում ենք այդ խաբուսիկ յոյսերը. մեր աչքն ու ականջը յառած արևմուտք և հիւսիս՝ սպասում ենք գէթ լոյսի մի նշոյլ տեսնել։ Մեր հայրերը և մեր ընտիր-ընտիր երիտասարդ ոյժերը, ազնիւ ու անկեղծ գործիչները սպառվեցին, կոտորվեցին, գերեզման մտան՝ այդ վաղորդեան արշալոյսը տեսնելու յոյսով, սակայն էլի ոչնչից ոչինչ չը տեսանք մենք. Թիւրքը Թիւրք մնաց իր խելակորոյս շահատակութեան մէջ, և քիւրդը իր անգիտակ ոճիրների մէջ. իսկ հայն իր տևական չարաչար նահատակութեան մէջ ստիպված եղաւ ասելու՝ «Արդարութիւն, ո՞ւր ես» յուսահատական վերջին խօսքը։

Բոլոր ճնշված ազգերը թօթափեցին իրանցից մահիկի լուծը, կտրատեցին դաժան կուռ շղթան, մտան ազատութեան, կուլտուրայի զարգացման մէջ, իսկ հայը, ասիական այդ նահատակ ժողովուրդն աւելի տանջվեց և տանջվում է տևական տանջանքով։

Քաղաքագէտների դռները բաղխելով յոգնեցինք, արիւն թափելով, վիրաւորելով ու վիրաւորվելով՝ էլի նոյն տապակվող դրութեան մէջ մնացինք. ո՞ւր գնանք էլ, ո՞ւմ դիմենք. ի՞նչ ճար մտածենք մեր դարաւոր վէրքին սպեղանի դնելու։ Այս վիճակը մեզ յիշեցնում է հայ բանաստեղծի ասածները.

Աստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, դուն վեր, շատ հեռու ես.
Այժմ էլ խոշոր գործերի ես,
Ապա ուրի՞ն մենք գանգատինք։

Թէև անյոյս մնալն էլ մի բան չէ, սակայն ներկայումս մեր գանգատը, մեր հայցումն ու պաղատանքը կը մնայ միայն տանջվող մարդկութեան պատմութեան բաժին։ Այն հայաջինջ քաղաքականութիւնը, որ ստեղծել է Թիւրքիան, մեր գոյութեան հիմքն է որ փորում է։ Երկրի երիտասարդ ոյժերի մի մեծ մասը պատերազմի դաշտումն է կոտորել տալիս, մի մասին որպէս ֆէդայիների՝ հալածանքի է ենթարկում և մի ստուար մասին էլ բանտերումն է տանջում, այնպէս որ մեր ապագան ողբալի է։

Եթէ այսպէս է, ապա որի՞ն մենք գանգատվենք։

Գ. Շէրենց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԲՐԱՀԱՄ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Վառնայում (Բուլգարիա), փետրվարի 3/16-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ, մօտ 75 տարեկան հասակում, կնքել է իր մահկանացուն հայ աւետարանական քարոզիչ և պաստոր Աբրահամ Ամիրխանեանը։

Հանգուցեալը անյայտ անձն չէ ոչ հայ հասարակութեան և ոչ հայ գրականութեան մէջ։ Եթէ նոյն իսկ անյայտ լինէր, նրա ս. Գրքի (Աստուածաշունչ և Աւետարանի) թարգմանութիւնը արարատեան աշխարհաբար լեզուով հրէական և յունական բնագրերից՝ բաւական է յաւերժացնելու նրա անունը։

Աբրահամ Ամիրխանեանը բուն շուշեցի է. նա որդին է մի ժամանակ շատ յայտնի միրզա Փարուխի, որին երեխայ ժամանակ պարսից Աբբաս միրզան գերի տարաւ Պարսկաստան և խալամացրեց։ Թիւրքմէնչայի դաշնագրի կնքումից յետոյ, նա ազատվեց գերութիւնից, վերադարձաւ իր հայրենիքը՝ Շուշի, ամուսնացաւ այդտեղ արդէն իբրև քրիստոնեայ և ունեցաւ զաւակներ։ Այդ ժամանակ (19-րդ դարի երեսնական թւականներին) Շուշի էին եկել աւետարանական քարոզիչներ՝ Զարեմբա և այլք. դրանց մօտ միրզա Փարուխը աշակերտ տուեց իր որդի Աբրահամին։ Զարեմբան նկատելով Աբրահամի ուշիմութիւնը և ընդունակութիւնները՝ ուղարկեց նրան Շվէյցարիա՝ Բազել քաղաքը, ուր նա ուսում առաւ բողոքական կրօնաւորների սեմինարիայում, որտեղ սովորեց յունարէն, լատիներէն, եբրայեցերէն, եւրոպական լեզուները, աստուածաբանութիւն, փիլիսոփայութիւն, մանկավարժութիւն և այլն։ Ապա նա սովորեց նաև արաբերէն, պարսկերէն, Թիւրքերէն, այնպէս որ քաջ արևելագէտ էր։ Նա նշանակվեց քարոզիչ, եկաւ Կ. Պոլիս, ուր ամուսնացաւ, ապա անցաւ Կովկաս, այդտեղից 70-ական թւականների սկզբին գնաց և հաստատվեց Թաւրիզ քաղաքում, ուր, իբրև աւետարանական քարոզիչ, մնաց մի քանի տարի։

Հանգուցեալ Գէորգ IV կաթողիկոսը կամեցաւ հրաւիրել նրան իբրև ուսուցիչ Գէորգեան ճեմարանը, պայմանով որ նա մտնի լուսաւորչական եկեղեցու գիրկը, բայց Ամիրխանեան մերժեց և եկաւ հաստատվելու Թիֆլիսում։ Նա «Մշակի» աշխատակից դարձաւ և երկար ժամանակ գրում էր. բաւական աղմուկ հանեց նրա մի յօդուածը «Վէրք տանք, վէրք առնենք» վերնագրով։ Դեռ Թաւրիզ եղած ժամանակ նա ձեռնարկել էր Աստուածաշնչի և Աւետարանի հայերէն աշխարհաբար թարգմանութեանը, որ շարունակեց Թիֆլիսում և աւարտելով՝ հրատարակվեց Բիբլիական Ընկերութեան ծախքով։

Թիֆլիսում նրա քարոզչական գործունէութիւնը բապտիստների և ռուս աղանդաւորների մէջ իր վրա դարձրեց ռուսաց կառավարութեան ուշադրութիւնը, որ աքսորեց նրան Կովկասից, ուստի նա գնաց հաստատվելու Ֆինլանդիայում։ Այդտեղ մի ժամանակ մնալուց յետոյ, անցաւ Շվէդիա և այդտեղից Բուլգարիա, ուր վերջապէս հաստատվեց Վառնա քաղաքում։ Նա թարգմանեց Ղուրանը հայերէն, գրեց Մահմէդի կեանքը և այլն։ Վառնայից երբեմն թղթակցում էր «Մշակին», գրում էր նաև յօդուածներ հայերի, հայկական հարցի մասին գերմանական և բուլգարական թերթերում։

Նա մի վերին աստիճանի աշխատասէր, կրթված և ձեռնհաս անձն էր աստուածաբանական, մանկավարժական և հայկական բանասիրութեան ասպարէզներում։

Հանգիստ նրա աճիւնին։

Հ. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, փետրվարի 17-ին, ցերեկվայ ժամը 1-ին, կայացաւ նորահաստատ Թիֆլիսի Հայկական Երաժշտական Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Հ. Առաքելեանի և քարտուղարութեամբ Արազեանի։

Ժողովը քննեց և հաստատեց վարչութեան առաջարկած նախահաշիւը 1913 թւի համար, որի համաձայն մուտք սպասվում է 1500 րուբլի։ Այդ գումարից 300 ր., իբրև մշտական անդամների վճար, պէտք է պահվի անձեռնմխելի, իսկ մնացած 1200 ր. պէտք է գործադրվի հայկական ժողովրդական երգեր հաւաքելու և հրատարակելու, ինչպէս և ժողովրդական երգեցողութեան մասին գրված լաւագոյն ինքնուրոյն աշխատութեան մրցանակի և մատենադարան-թանգարանի համար։

Ժողովի վիճաբանութեան առարկայ եղաւ մշտական երգեցիկ խումբ կազմակերպելու և պահելու հարցը, սակայն ձայների մեծամասնութեամբ որոշվեց, որ նոր ընկերութիւնը առ այժմ իր գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնէ հաւաքել հարազատ կերպով ժողովրդական երգերը, երաժշտական եղանակները, խրախուսել հայ կոմպոզիտորներին, հրատարակել երաժշտութեան և երգեցողութեան ձեռնարկներ մեր դպրոցների համար։

Վարչութիւնը մտադիր է այս տարի երաժշտական երեկոյթներ տալ։

Ընկերութիւնը ունի այժմ 60 անդամ, որից 3-ը իբրև մշտականներ՝ վճարել են 100-ական րուբլի, այն է տ. տ. Իւլիա Սպենդիարեան, Ե. Աֆրիկեան և պ. Հ. Մելիքեան։

Ժողովը, նախագահի առաջարկութեամբ, որոշեց այսուհետև ընդհանուր ժողովները կայացած համարել, երբ ներկայ կը լինի Թիֆլիսում գտնվող անդամների մի երրորդական մասը։

Ժողովը փակվեց ժամը 3 և կէսին։

ՔԷԲՈՒՐՈՎԻ ԹՌԻՉՔԸ

Կիրակի, փետրվարի 17-ին Դիդուբէի ձիարշաւարանում տեղի ունեցաւ օդագնաց Քէբուրովի թռիչքը սեփական գործիքով։

Ժամը 3-ի մօտերը ամբողջ ընդարձակ տարածութիւնը գլուխների ծով էր դարձել։ Գեղեցիկ եղանակը գրաւել էր անհամար բազմութիւն թէ տղամարդկանցից և թէ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներից։ Այդ օրը ներկայ էին բազմաթիւ զինուորականներ ևս, որովհետև թռիչքը կազմակերպել էր օֆիցէրական միութիւնը։

Մի ամբողջ ժամ գործ դրվեց գործիքի (Ցէպէլինի սիստեմի նման, երկու թևերով) կարգաւորման վրա։ Երբ նա արդէն պատրաստ էր, ուղիղ ժամը 4-ին Քէբուրովը սկսեց մօտորը գործել տալ։ Եւ անցած երկու-երեք րոպէ՝ օդագնացը արդէն իր գործիքով օդումն էր։

Քէբուրովը սկզբում շատ չէր բարձրանում, բայց յետոյ աստիճանաբար սկսեց աւելի վեր թռչել, կատարելով միևնոյն ժամանակ սիրուն ձևեր։ Նա բարձրացաւ մօտակայ լեռների վրա, շրջվեց և կրկին հեռացաւ։ Եղան մի քանի րօպէներ, երբ համարձակ օդագնացը աներևութացաւ լեռների ետև։ Սակայն ահա դարձեալ երևաց նա իր գեղեցիկ պտոյտներով։

Ճիշդ կէս ժամ Քէբուրովը թռչում էր օդում հարթ, առաջ բերելով ընդհանուրի ոգևորութիւնն ու հիացմունքը։ Եւ նորից մի քանի պտոյտներ գործելուց յետոյ նա կամեցաւ իջնել։ Բայց այդ լիակատար աջողված թռիչքի վերջը մասամբ ընկաւ ստուերի մէջ, երբ գործիքը գետնին մօտ գտնված միջոցին ընդհարվեց մօտակայ ցանկապատին։ Ինքը Քէբուրովը իր ժամանակին կարողացաւ ցատկել և մնաց անվնաս, միայն գործիքի թևերից մէկը փչացաւ, հասցնելով վնաս մօտ 1000 ր.։ Եւ որովհետև այդ դէպքը մի փոքր հեռուն կատարվեց, հազարաւոր ամբոխը վայրկենաբար գրոհ տուեց դէպի այն կողմը, երկիւղ կրելով թէ դժբաղդութիւն պատահած կը լինի օդագնացի հետ։ Բարեբաղդաբար կասկածները զուր էին, և խիզախ օդագնացին կառքով բերին իր տեղը։

Անպայման խրախուսանքի արժանի է Քէբուրովը, որ, մօտիկ մարդկանց ասելով, համարեա իր ամբողջ կարողութիւնը նուիրել է իր սիրած գործին։ Նա ունի կին և երեք երեխայ։

Այս անգամվայ թռիչքը ամենից աջողվածը պէտք է համարել։

Ե.

ԷԼԵԿՏՐԱՔԱՐՇԻ ՀԱՐՑԸ ԲԱԳՒՈՒՄ

Բագու, 3 փետրվարի

Բագուի բնակիչների և այն էլ բանւոր, արհեստաւոր, անշահ ռոճիկներով ծառայող մանրավաճառ-խանութպան և ընդհանրապէս ստորին և միջին դասակարգի համար, որոնք քաղաքի բնակիչների 80%-ն են կազմում, կենսական խնդրի չափ հետաքրքրական է էլեկտրաքարշի հարցը։

Այդ հարցը վաղուց է հրապարակի վրա դրված, այն օրից, երբ դեռ երկրորդ տարին էր, ինչ շինվել էր ձիաքարշի գիծը, և երբ Նիկոլայևսկի փողոցի վերին մասից դէպի ցած իջնում էր ձիաքարշը, հնար չեղաւ պահել և սրընթաց, գնդակի նման սրատալով գլորվեց «Մետրօպօլ» հիւրանոցի մօտ (1889 թ., եթէ չեմ սխալվում), ջարդ ու փշուր եղաւ, մի քանի կառանց ձեռք ու ոտքը կոտրվեց, մահացու վէրք ստացան ձիաքարշի երկու ծառայողները և շատ մարդիկ։

Այդ օրվանից վերացվեց Նիկոլայևսկի փողոցի գիծը և այդ օրվանից էլ միտք յղացաւ կառուցել էլեկտրաքարշը, որպէս զի քաղաքացիք ընդհանրապէս օգտվեն։

Այդ օրվանից անցել է մօտ մի քառորդ դար, բայց դեռ Բագուն էլեկտրաքարշ չունի։ Սակայն վերջին 2—3 տարվայ մէջ այդ հարցը շատ ծեծվեց և այսօր այնքան հասունացաւ, որ նորընտիր քաղաքագլուխ Բիչը, որ երկար տարիներ ձայնաւոր է եղել քաղաքի ու քաջ ծանօթ է տեղական կարիքներին, ճանապարհվեց Պետերբուրգ շտապեցնելու գծի կառուցման գործը, և քաղաքացիք մեծ յոյս ունեն, որ շուտով Բագւում կը տեսնեն վաղուց ի վեր փափագված էլեկտրաքարշը։

Քաղաքացիներին հետաքրքրում է և մի այլ, նոյնպէս ոչ պակաս կարևոր միտք. այդ այն է, թէ առաջին, 2-դ, 3-դ, 4-դ և 5-դ և այլ գծերի հերթը ինչպէս պիտի դրվի։

Բագուն ունի մի շարք արուարձաններ, ինչպէսիք Բալախանսկի շօսսէ, Մօլոկանսկայա սլաբօդկա, Հայոց արուարձան, Բայիլօվ, Սպիտակ քաղաք և Թուրքական արուարձան։ Դրանք բոլորն էլ բուն քաղաքից դուրս են, մի քանի վերստ հեռաւորութեան վրա ընկած։ Քաղաքի ներսում նոյնպէս կան այնպիսի թաղեր, որպիսի թաղերում նոյնպէս անհրաժեշտ է էլեկտրաքարշի գիծը, ինչպէս օրինակ Զէմբէրէքէնդ, Նագօրնի, Ստանիսլավսկի, Նիկոլաևսկի փողոցները։

Սակայն խնդիրը նրա մէջն է, թէ քաղ. վարչութեան յանձնախումբը առաջին և կարևոր գիծը ո՞ր արուարձանի համար կընտրէ։ Թէև Մօլոկանսկայա սլաբօդկա ծայրամասը բոլոր միւս արուարձաններից հեռու է, բայց այնտեղ բնակիչները երկու յարմարութիւններ ունեն—նախ այն, որ ճանապարհի անհամեմատ մեծամասնութիւնը քարած է, որին «Բալախանսկի շօսսէ» անունն են տալիս, երկրորդ, որ այդ արուարձանի բնակիչները ընդհանուր առմամբ պարապում են սայլապանութեամբ (դրօգ, ֆուրգօն և սայլեր են բանեցնում), որպիսի գործը նրանց երթևեկութիւնը այնքան էլ չէ դժուարացնում։ Բացի այդ, նրանք գործով կապ ունեն Բալախանու և Սև-քաղաքի հետ, իսկ իրանց բնակավայրը Բալախանու ու քաղաքի մէջև է գտնվում։ Այդ գիծը կարելի է թողնել 4—5-րդ տեղը։ Մնացեալներին կարելի է նոյնպէս տեղ տալ 2—3-դ։ Իսկ ինչ վերաբերում է Հայոց և Թուրքաց արուարձաններին, առաջին տեղը այդ երկուսին պիտի տալ, մանաւանդ որ մէկի մուտքը (Թուրքականը) դէպի արուարձան, անցնում է Շամախինսկի փողոցով, իսկ միւսի (Հայոց արուարձանի) մուտքը կայարանի մօտից է, Ստանիսլավսկի փողոցից։ Այդ երկու փողոցները, թաղերը բազմամարդ են ևս առաւել, որ մի թաղը գտնվում է քաղաքի մի ծայրում, միւսը՝ միւս ծայրում։

Հայոց արուարձանի բնակիչների դրութիւնը միանգամայն անտանելի է, աւելի դառը քան միւս վայրերի բնակիչներինը, որովհետև այդ տեղի բնակիչների 50%-ը բանւոր դասակարգին է պատկանում. նրանք առաւօտեան վաղ պիտի գնան գործի իրանց բնակարանից 5—15 վերստ ճանապարհ (մի մասը երկաթուղով, եթէ Բալախանի են աշխատում), երեկոյեան նոյնպէս պիտի վերադառնան իրանց բնակարանը։ Արուարձանի ներսը, փողոցները միանգամայն անտանելի են, ցեխ, փոշի, քանդված դարաններ։ Շատ է պատահել, որ անձրևների ժամանակ փողոցներում լիճ է կազմվել, դպրոցական աշակերտներ են խեղդվել մէջը, հէնց իրանց տան դրան առաջ։ Մեր քաղաքի հին հայրերը շատ քիչ, կարելի է ասել նաև անխիղճ կերպով են մտածել այդ արուարձանի բնակիչների մասին. նրանք աշխատել են միմիայն գետինը ծախել, կապալով տալ, կապալադրամը ժամանակին ստանալ, պարտաւորեցրել են շէնք կառուցել, այլապէս գետինը կը խլվի... Եւ այդ ամեն հրամանները կատարվել է. բայց հրամայող «հայրերին» երբ յիշեցրել են իրանց պարտականութիւնները, նրանք արհամարհել են բնակիչներին։ Քաղաքի «հայրերը» 200—300 տնատէր, ընտանիքների ապրելու վայրում մի ջրանցք չեն շինել, մի փողոց չեն ուղղացրել քարել, որպէսզի մարդիկ իրանց բնակարաններից դուրս գալիս, հարևան տունը կամ խանութ մտնելիս ապահով անցնեն, չը խեղդվեն ջրի մէջ...

Գոնէ քաղաքիս ներկայ հայրերը հիների մեղքը քաւելու համար պարտաւոր են էլեկտրաքարշի առաջին գիծը Հայկական արուարձանը տանել։

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսում վերջացան Կովկասի նահանգապետների, արքունական պալատների կառավարիչների, հաշտարար միջնորդների և հարկային տեսուչների խորհրդակցութիւնները, որոնց ժամանակ 1912 թ. դեկտեմբերի 20-ին հողերի յետ գնման մասին հրատարակված օրէնքի առիթով մշակվեցին առանձին հրահանգներ յանուն հաշտարար միջնորդների, հարկային տեսուչների, արքունական պալատների ու հողաչափերի։ Նահանգապետները ներկայանալով փոխարքային մեկնեցին իրանց տեղերը։

◆ Այսօր Թիֆլիսի դատաստանական պալատի առանձին ատեանում կը քննվի հոգեկան հիւանդների բուժարանից փախած ուսանող Տէր-Պետրոսեանի մեծադղորդ գործը, որ մեղադրվում է Երևանեան հրապարակում զինված կողոպուտ գործելու մէջ։ Տէր-Պետրոսեանի հետ մեղադրվում են նաև ուրիշները։

◆ Փետրվարի 15-ի գիշերը ոստիկանական պաշտօնեաները, գրաքննիչ կոմիտէտի պատուէրի համաձայն, մտան այն տպարանը, ուր տպվում է վրաց «Սախալխօ Գազէթի» լրագիրը և գրաւեցին նրա № 824-ը «Պետական Դումայի և հոկտեմբերի 17-ի մանիֆեստը» յօդուածի համար։ Խմբագիրը ենթարկվում է պատասխանատւութեան 1034-րդ յօդուածով։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը առաջարկում է քաղաքացիներին փետրվ. 21-ին Ռոմանովների Տան 300-ամեակ յոբելեանի առիթով զարդարել իրանց տների պատշգամներն ու շինութիւնները դրօշակներով ու ծաղիկներով, իսկ իրիկոյեան հրավառել։

◆ Քաղաքային վարչութեան որոշմամբ ամէն մի տնատէր ու առեւտրա-արդիւնաբերական հաստատութեան տէր ունենալու են սանիտարական տետրակներ առաջիկայ մարտի 1-ից։ Իւրաքանչիւր տետրակն արժէ 15 կ.։

◆ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան խորհուրդը այս տարվայ աշնանը Թիֆլիսում գումարում է կովկասեան գիւղատնտեսների 2 րդ համագումար։

◆ Թիֆլիսում ձիարշաւները կը սկսվեն ապրիլի 17-ից և վերջանալու են մայիսի 19-ին։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը շնորհակալութեամբ ստացել է տ. Նինա Ալէքսանդրեան Ղօրղանեանից ի յիշատակ հանգուցեալ իշխ. Ա. Ի. Բէհբութեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն յօգուտ Ընկ. որբանոցի 25 րուբլի։

◆ Այսօր Արքունական Թատրոնում երկրորդ անգամ կը տրվի «Նէյլա» օպերան։ Խմբի հրաժեշտի ներկայացումը նշանակված է փետրվարի 24-ին, կիրակի օրը։

◆ Այսօր Արտիստական Թատրոնում Կուզրէավցէվի բենեֆիսի առիթով կը կրկնվի «Дворянское Гнѣздо»-ն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Շաբաթ, փետրվարի 16-ին, Արտիստական Թատրոնում Զարէչնիի դրամատիկական խումբը ներկայացրեց Գօնչարովի յայտնի «Օբլօմով» վէպից փոխադրված համանուն պիէսը։

Որքան հաճելի է կարդալ շնորհալի լեզուով գրված վէպը, որ տուել է առօրեայ կեանքում գործածվող «օբլօմովշչինա» տերմինը, այնքան, մեր կարծիքով, տաղտկալի է տեսնել վէպից փոխադրված պիէսը։

Բէլեայեվը հարազատօրէն ներկայացրեց Օբլօմովի, այդ զուտ ռուսական երազող ծոյլի տիպը։ Ե.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

Խօսելով կլուբի երեկոյթների մասին, չէ կարելի առանձնակի ուշադրութեան չարժանացնել շաբաթ օրվայ հերթական երեկոյթը, որը ամբողջովին նուիրված էր Շանթի «Հին Աստուածներին»։

Այստեղ մի անգամ էլ երևաց, որ Շանթի նոր դրաման շարժեց մեծ հետաքրքրութիւն նաև ռուս հասարակութեան առաջ։

Դահլիճում, ինչպէս սովորաբար լինում է հասարակական կլուբում, բացի ռուս ինտելիգենտ անդամներից, այս անգամ եկել էին և հիւրեր բաւականին մեծ թւով. սրանց մէջ կային նաև վրացիներ և հայեր։

Ամենից առաջ պէտք է նկատել տիկին Խան-Ազատի դասախօսութիւնը նուիրված «Հին Աստուածներին»։ Դասախօսութիւնը յարմարեցրված էր ռուս հասարակութեան համար և ի միջի այլոց մտցրած Ս. Մալխասեանցի լուսաբանութիւնները դրամայի պատմական նիւթի վերաբերմամբ։ Տիկինը կարդաց առանց ձանձրոյթի, ամփոփ և ներշնչված արժանաւոր գնահատումներով։ Հայ հասարակութեան յայտնի է տիկնոջ լուսաբանութիւնները Գրական-Գեղագիտական Սալոնում կարդացածից, բայց և այնպէս ռուս հասարակութեան առաջ էս նրա ուրուագիծն ու տեսակէտները գործեցին ցանկալի տպաւորութիւն։ Նրա բացատրածով՝ «Հին Աստուածները» վերին աստիճանի գեղարուեստական մի դրամա է։

Դասախօսութիւնից յետոյ ուսուցիչ Յովհաննիսեանի նախագահութեամբ տեղի ունեցան զրոյցներ ռուսաց լեզուով։ Նախագահը իր կողմից թէ սկզբում և թէ յետոյ տուեց հետաքրքրական լուսաբանութիւններ պիէսի մասին։ «Շանթի պիէսը,—ասաց նա,—վերջին երկու ամիսը փոթորկել է հայ ինտելիգենցիային. նրանց մէջ ի հարկէ եղաւ և բացասական վերաբերմունք։ Այդպէս, օրինակ, գտաւ ժամանակ մէկը նոյնիսկ սինեմատօգրաֆիական պատկերներ անուանեց։ Բայց այնքանը ճիշդ է, որ սինեմատօգրաֆը երբէք մարդու չէ յուզում, մինչդեռ Շանթի պիէսը յուզեց ամենքին։ Հէնց այն երևոյթը, որ այսքան խօսակցութեան տեղիք է տուել, ապացոյց է, որ պիէսը տաղանդաւոր գրուածք է։ Ի հարկէ, եթէ մենք «Հին Աստուածները» դնենք մի մակարդակի վրա «Ֆաուստի» կամ «Համլէտի» հետ, դա սխալ կը լինի. բայց եթէ վերցնէք հայ իրականութիւնը, որտեղ պիէսները մեծ մասամբ գրվել են ազգայնական գունաւորումներով, այն ժամանակ կարելի է ասել, որ Շանթի պիէսը առաջին անգամ հայ դրամատուրգիայի մէջ բերում է եւրոպական հովեր։ Այդ հովերը նոր չեն եւրոպական կամ ռուսական գրականութեան մէջ, բայց նոր են հայ գրականութեան համար։ Իր մտքերը արտայայտելու համար Շանթը ընդունել է սիմվօլիկ ձևը»։

Եւ նախագահը երկար օրինակներով ապացուցելով պիէսի արժանիքը՝ բուռն ծափահարութիւնների տակ առաջարկեց խօսողներին բաժանվել երկու կատեգօրիայի, որպէսզի խօսածները որոշ ձև ընդունեն։ Ամենից առաջ խօսք տրվեց բացասական կողմերին։ Խօսում է Համբարձումեան։ Նա խօսեց երկար, գեղեցիկ դարձուածքներով։ Աւելի մանրամասն նա կանգ առաւ պիէսի գեղարուեստական հակասութիւնների վրա։ Իսկ աջողութիւնը վերագրեց մեր ժամանակի հիւանդոտ տրամադրութիւններին։ «Տեսէք,—ասում էր նա,—Անդրէեվի «Անաթեման» սկզբում աղմուկ հանեց, բայց այժմ մոռացված է, իսկ «Համլէտը», որ իր ժամանակին չը գնահատվեց, այժմ համաշխարհային երկ է։ Այդպէս է լինում մեծագոյն գրուածքների վիճակը, որոնք անհասկանալի են մնում ժամանակակիցների համար։ Իսկ ինչ է Շանթի գրուածքը։ Նրա մէջ դրամայից պահանջվող ներքին կռիւը չը կայ։ Դրամայի մէջ մի որոշ կենտրոն չը կայ. այնտեղ կայ դուալիզմ—վանահայրը և աբեղան։ Դրաման պէտք է ունենայ որոշ կռիւ և դրամատիզմը զարգանայ, ինչպէս ընկնող բարձրից մի մեծ քարի թափը»։ (Ծափահարութիւններ)։

Երկրորդը խօսում է վրացի գրող Նակաշիձէն. նա ասում է, որ ինքը չէ կարդացել դրաման, բայց այստեղ տրված բացատրութիւններից տեսնում է, որ դրաման զուրկ է արժանիքից։ Եւ իբրև արժէքից զուրկ մի նման երկ բերում է Ի. Ճավճավաձէի «Մենաւոր» գրուածքը, որտեղ արծարծվում է,—ասում է Նակաշիձէն,—թէ ինչպէս մի մենաւոր գայթակղվում է մի հովիւ աղջկանից։

Ա. Աթանասեան ասում է. «Ես երկար չեմ խօսի պիէսի արժանիքների մասին. դրանց բաւականին ասաց մեր նախագահը. բայց մի բան կասեմ. դրամա է թէ չէ՝ չը գիտեմ, բայց մի բան գիտեմ, որ ինձ իբրև ինտելիգենտի «Հին Աստուածները» խոր յուզել է. չը նայած որ պիէսը տեսել եմ երկու անգամ, և ահա երկու անգամն էլ նոյն յուզմունքը. այդ ինչով կը բացատրէք. ես կարծում եմ՝ միմիայն նրա արժանիքով»։

Յ. Սօլօվեան խօսում է վերջում, խօսում է երկար և կէտ առ կէտ ջրում է Համբարձումեանի առարկումները։ «Մեզ ասացին,—ասաց Սօլօվեան,—որ «Անաթէման» լաւ ընդունվեց. դա սխալ է. «Անաթեմային» կրիտիկան հէնց սկզբից լաւ չը վերաբերվեց. իսկ ահա ձեզ օրինակ Տօլստօյի «Воскресенье» գրուածքը յուզեց ամբողջ Ռուսաստանը հէնց երևալու օրից, բայց մինչև այսօր նրա հմայքը ոչ թէ ընկնում է, այլ աճել է ու աճում։ Այդպիսով պիէսի արժանիքը վերագրել էպօխային՝ սխալ ըմբռնում է։ Երկրորդ՝ Համբարձումեան ասում է, թէ միութեան կենտրոն չը կայ, այլ դուալիզմ. կենտրոն կայ և դա այն խնդիրն է, որ շօշափում է մարդու կրքերի և մտքի միջև եղած ընդհարումը»։ Այնուհետև երկար վերլուծում է պիէսի որոշ կէտերը, ապացուցում է՝ թէ ծովը, Սեղան ի՛նչ են նշանակում. պարզում է, թէ աբեղան ինքնասպանութիւն գործելու կարիք էլ չունէր, քանի որ նա եթէ գնար Ցամաքաբերդ, կը գտնէր այն, ինչ որ խօսում էր։ Պատմում է թէ հայերի մէջ որ չափով է եղել զարգացած կուսակրօնական պաշտամունքը, որ չափով նա տարբերվել է Ռուսաստանի, օրինակ Լեսբոսի հակացողութիւններից, որ չափով քրիստոնէութիւնը մուտք գործելով Հայաստան արգելքների է հանդիպել և հայերը միշտ ձգտել են որոշ չափով թուլացնել նրա ասկետիզմը. ապացոյց՝ ընտրողական սկզբունքը։ Կանգ առնելով այդ լուսաբանութիւնների վրա, Սօլօվեան մտնում է պիէսի բացատրութեան և գտնում, որ աբեղան դա այն դէմքն է, որը ուզում է և որոնում է կեանքը, և նա չէ խուսափում գաղափարներից, այլ ձգտում է միացնել մտքի թռիչքը սրտի պահանջի հետ։ Իսկ այդ պահանջը նորագոյն փիլիսոփայութեան պահանջ է։ Գալով այն մտքին՝ թէ պիէսը պատմական է թէ չէ, Սօլօվեան տալիս է այսպիսի մի օրինակ. վերցրէք Ֆրանսիացուն կամ անգլիացուն, հագցրէք ասիացու զգեստ. եւրոպացին ասիացի կը դառնա՞. կարծում եմ—ո՛չ. այդ չափով էլ պիէսը կարելի է պատմական համարել։ (Ծափահարութիւններ)։

Դրանից յետոյ յայտարարվում է միջոց. խօստանում են առաջիկայ հինգշաբթի նորից շարունակել զրոյցները։ Վերջում տեղի է ունենում երգեցողութիւն։ Բոլոր երգիչները այս անգամ լաւ էին, մանաւանդ դուր եկաւ օրիորդի երգելը, որին ստիպեցին երեք անգամ երգել։ Ներողութիւն ենք խնդրում, որ երգիչների անունները չը գիտենք։

Հաւփ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ի նկատի ունենալով, որ Կ. Պօլսում թէ մզկիթների մէջ և թէ լրագիրներում շարունակվում է Թիւրքերի կողմից հակաքրիստոնէական պրօպագանդա, մեծ պետութիւնները խորհուրդ տուին Բ. Դրանը անմիջապէս վերջ դնել այդ պրօպագանդային, այլապէս եւրոպական զօրքերը դարձեալ կիջնեն մայրաքաղաքի ցամաքը։

◆ Կ. Պօլսից անթել հեռագրով տեղեկացնում են, որ Ադրիանուպօլիսը անձնատուր է եղել։ Բերդի վրա ծածանվում է բուլղարական դրօշակ։

◆ Կ. Պօլսից դեռ պաշտօնական վաւերացումն չը ստացվեց Ադրիանուպօլսի անկման մասին։ Ենթադրում են, որ այդ լուրերը բօրսային խաղեր են։

◆ Կ. Պօլսում Եավէր-փաշայի բնակարանում տեղի են ունենում գաղտնի համախմբումներ, որոնց նպատակն է տապալել երիտասարդ-Թիւրքերի իշխանութիւնը։

◆ Չաթալջայում սաստիկ սառնամանիքներից ցրտահար եղան 800 թիւրք զինւոր, Խադէմքեօյի մօտերը՝ 280 հոգի։

◆ Մարմարա ծովափի քրիստոնեայ գիւղերը շարունակ ենթարկվում են թիւրքերի ասպատակութիւններին։ Լումայի շրջակայքում թիւրքերը սրի են քաշել աւելի քան 1000 բնակչի։

◆ «Գլաս Չերնօգօրցա» լրագիրը գրում է. «Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը հրամայել բարեհաճեց գնել 375,000 պուդ հացահատիկ և 180,000 պուդ ալիւր և յանձնել կայսերական այդ նուէրը մեր կառավարութեանը՝ Չերնօգօրիայի աղքատ ընտանիքներին բաժանելու համար»։

◆ Կ. Պօլիսը յայտարարված է պաշարողական դրութեան մէջ։ Հակառակորդների ընդհարումները սպառնում են շատ սուր կերպարանք ստանալ։

◆ Թիւրքաց զինւորական մինիստր Իզզէթ-փաշան հրաժարական տուեց, պատճառաբանելով հրաժարականը զօրքի անյուսալի դրութեամբ։ Սուլթանը յորդորեց նրան յետ վերցնել հրաժարականը։ Իզզէթ փաշան համաձայնեց այն պայմանով, որ յետագայ անաջողութիւնների համար նա պատասխանատու չէ կարող համարվել։ Այդ մասին նա նոյնիսկ գրաւոր թուղթ վերցրեց։

◆ Բ. Դուռը Հակկը-փաշային կարգադրեց մեկնել Հռոմ բանակցելու թիւրք-իտալական դաշնակցութիւն կապելու մասին։

◆ Սուլթանի ցանկութեան համաձայն՝ արտասահմանեան լրագիրների թղթակիցների հեռագիրների թարգմանութիւնը յանձնվում է իրան։

◆ Մահմուդ-Շէվքէթ փաշան պաշտօնապէս տեղեկացրեց Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսին, որ Թիւրքիան համաձայն է յանձնել Ադրիանուպօլիսը և Եգէյեան կղզիների հարցի լուծումը թողնել մեծ պետութիւններին։ Գիրսը այդ մասին իրազեկ արեց միւս մեծ պետութիւնների դեսպաններին։

◆ Անգլօ-ֆրանսիական 8 ռազմանաւ մօտեցան Դարդանէլին։

◆ Բերլինից հեռագրում են, որ Քեամիլ-փաշային թունաւորել են։

◆ «Н. Вр.»-ն հաղորդում է, որ աւարտած է Իւշչինսկիի սպանութեան գործի մեղադրական արձանագրութիւնը Բէյլիսին վերաբերեալ։ Արձանագրութեան մէջ կտրական ցուցում կայ, թէ սպանութիւնը կրում է ռիտուալ բնաւորութիւն, և բերված է պատմական ապացոյց ի հաստատութիւն այն բանի, որ նման սպանութիւններ միշտ թոյլատրվել են հրէաների մօտ։

◆ Սենատի առաջին և վճռաբեկ ատեանների միացեալ նիստը, որ փետրվարի 16-ին քննելու էր քննիչ Լըժինի մասնաւոր կարգադրութեան քննութեան հետևանքները, «Н. Вр.»-ի ասելով, յետաձգվում է անորոշ ժամանակով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

16 փետրվարի

ԿԱՐԼՍՐՈՒԷ։ Ռուս ուսանողների կօնգրէսը փակվեց։ Բեռլինում հաստատվեց 7 հոգուց բաղկացած գործադիր մարմին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Քաղաքային դուման յատկացրեց $3^1/_2$ միլիօն րուբլի քաղաքային հիւանդանոց կառուցանելու 1000 մահճակալով, անուանելով այն «Րօմանօվեան»։

Եկաւ Խիվայի խանը հանդէսներին ներկայ լինելու համար։

Բուխարական էմիրը իր շքախմբի ուղեկցութեամբ այցելեց Պետրոս-Պօղոսի տաճարը և արծաթէ պսակ դրեց Ալէքսանդր III կայսրի դամբարանի վրա։

Բարձրագոյնս հաստատվեց մինիստրների խորհրդի այն որոշումը, որով 1913 թ. փետրվարի 21-ի օրը համարվում է տօն օր ամբողջ պետութեան մէջ։

Քաղաքապետը 500 ր. տուգանքի նշանակեց «Лучъ»-ի խմբագրին փետրվարի 15-ին տպված «Տսվուդ կամ Մարկսի Կապիտալ» յօդուածի համար։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքապետը «Русск. Слово» և «Студенческое Дѣло» թերթերի խմբագիրներին ենթարկեց 500-ական ր. տուգանքի։

«Լիւքս-Մօտօր» գարաժում հրդեհը ոչնչացրեց 18 աւտոմոբիլ, 80,000 ր. արժողութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նահանգապետի խորհրդակցութեան մշակած ոստիկանութեան բարենորոգման նախագծի համաձայն անհրաժեշտ է ընդունված ոստիկանութիւնը միացնելու նպատակով նահանգապետի իրաւասութեանը յանձնել նահանգի բոլոր ոստիկանական մարմինները. անհրաժեշտ ճանաչվեց բարձրացնել ոստիկանական պաշտօնեաների կրթական ցենզը նրանց նիւթական բարելաւման հետ միասին։ Ոստիկանութիւնը իրաւունք է ստանում աննշան յանցանքներ գործած անձանց ենթարկել դրամական տուգանքի կամ կարճժամանակեայ բերդարգելութեան, այն պայմանով միայն, որպէսզի անհամաձայնութեան ժամանակ գործը յանձնվի դատարանին ընդհանուր հիմունքներով։ Խիստ միջոցներ են մշակված խուլիգանութեան դէմ և այլն։

17 փետրվարի

ՏՕԿԻՕ։ Լուրերի համաձայն սեղանաւորները խորհրդակցել են չին-ճապօնական դրամատուն հիմնելու մասին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերջացան գիւղատնտեսական փորձնական գործի առանձին խորհրդակցութեան աշխատանքները. վճռվեց հիմնել Պետերբուրգում փորձնական հաստատութիւնների կենտրոնական թանգարան։

Փակվեց մամուլի ցուցահանդէսը։

ՄՕՍԿՎԱ։ Եկաւ օդային նաւատորմի կոմիտէի օգոստափառ նախագահ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչը։ Քաղաքապետի տանը Մեծ Իշխանին ներկայացան Մօսկվայի կոմիտէի անդամները, որոնցից Բարտիգինը և Խարիտօնենկօն ցանկութիւն յայտնեցին նուիրել ամեն մինը 10,000 ր. աէրօպլաններ գնելու համար։ Երեկոյեան Մեծ Իշխանը այցելեց ազնուականների պարահանդէսը, որ յօգուտ օդային նաւատորմի էր կազմակերպված և ունեցաւ նիւթական մեծ աջողութիւն։

Վախճանվեց «Գուստաւ Լիստ» ընկերութեան վարչութեան նախագահ Լիստը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

Թիֆլիս, Գիտ ք. Աղամեանին.—Չը գիտենք, ինչու համար էք վրդովմունք ցոյց տալիս։ «Մշակի» մէջ բնաւ ասված չէ, թէ «դուք էջմիածնից և զանազան վանքերից ձեր սեփականութեամբ ձեռագիրներ էք ստացել արտագրելու պայմանով և չէք վերադարձրել», ինչպէս դուք կամենում
վերագրել «Մշակին» «Հորիզոնի» մէջ տպ
ված ձեր բաց նամակով։

Այդպէս չէ. ասված է միայն, թէ «
սարակութեան մէջ տարածված են լուր
թէ...»։ Տարբերութիւնը շատ մեծ է,
նաւանդ որ յետոյ աւելացրած է. «Ա
շուշտ, այս լուրերը կարող են ճիշդ չը
նել», և հէնց այդ հիման վրա դուք հր
աւիրվում էք լուսաբանել։ Խնդիրը ինքն ըս
ինքեան կը փակվէր, եթէ դուք մի նամ
կով վճռական կերպով հերքէիք. ձեր հե
քումը մենք կը տպէինք, և հարցը կը վե
ջանար։ Բայց դուք փոխանակ դիմել
այդ պարզ միջոցին, հարկաւոր էք համ
րում սպառնալ մեզ դատարանով, իսկ բո
հարցի մասին մի բառ անգամ չէք ասու
այնպէս որ դարձեալ հայ հասարակութիւ
մնում է անյայտութեան մէջ «Нов. Вр.»
հաղորդած տարօրինակ լուրի մասին։ Ա
արժանապատիւ հայր, բարի եղէք պ
կերպով յայտնել. 1) ճիշդ է, որ դուք
հատ հայերէն թանգագին ձեռագրեր գ
էք Ասիական Թանգարանին, 2) ձեր ա
նական սեփականութիւնն էին կազմում
ձեռագրերը, թէ ոչ, 3) եթէ այո, ո
ումից էք ձեռք բերել կամ գնել նրան
4) եթէ ոչ, ծվ է նուիրել ձեզ կամ ինչ ա
ղից էք ստացել։ Վրդովվելու և վիրաւոր
լու ոչ մի կարիք չը կայ, ինչպէս և դ
տարանին դիմելու, որովհետև, հաւաս
նում ենք ձեզ, կը գտնվեն գոնէ մի ք
անձինք, որոնք կը վկայեն դատարանի
առաջ, թէ իրանք ևս լսել են այն լուրեր
որ յիշատակում է «Մշակը»։ Միայն դ
ձեր դրական հերքումով կարող էք վ
տալ այդ լուրերին, իսկ մամուլի քար
կան պարտքն է հասարակական շահերի պաշ
պանութեան հարցում չը վախենալ դատ
րանի դիմելու սպառնալիքներից։ Դժու
թէ նոյն իսկ «Հորիզոնը», որ շտապել
տեղ տալ ձեր նամակին, փոխանակ առ
ջարկելու ձեզ, ինչպէս պահանջում էր կ
րեկտութիւնը՝ դիմել «Մշակին», կարող
նայ պաշտպանել ձեզ այս հարցում, որ կ
յանում է լուսաբանել, թէ ի՛նչ ձեռագր
են ռուս թերթի յիշած 80 հատ թանգագ
ձեռագրերը և որտեղից կամ ինչ եղան
կով էք ձեռք բերել։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առողջութեան
համբաւաբեր

«Դ-ր Մէյէրի Ստոմօկսիդէնը». ներգործում է շատ նըպաստաւոր՝ աղիքների քրօնիկական ատօնիայի և ստամոքսա-աղիքային կատարի դէպքում, դադարեցնելով թթուածութիւնը և մետէօրիզմը։ Մեղմ և բնական կերպով մաքրում է աղիքները։

Դ-ր Տ. Նովիկով։ Բագու։

ԴԵՂԱՏՈՄՍԸ

Վերցրէք մօտակայ դեղատնից կամ դեղապահեստից «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիդէնից» 2 շաբաթ բաւականացող մի արկղիկ և ընդունէք 1—2 թաբլէտկա օրական 3 անգամ, մինչև որ ձեր մարսողութիւնը կը կանոնաւորվի։

(П. 18984)

Լոյս տեսաւ
Լ. ԱԹԱԲԷԿԵԱՆ
Բանաստեղծութիւններ
Գինը 50 կօպ.

Պահեստը Բագու «Պօսրեդնիկ» գրավաճառանոցում։

(օ.մ.) 121. 6—3

№ 4711. ՄԱԶԵՐԻ ՆԵՐ
Ընկուզեայ էկստրակտից

Ներկում է մազերը արագ և հիմնաւոր, նայած ց
կութեան, բնքոյշ շիկագոյնից սկսած մինչև կատար
սևը։ Անվնասակար լինելը երաշխաւորված
Մի սրուակը 1 ր. 20 կ.։ Մեծադիրը 2 րուբ

Պարֆիւմէրիա № 4711 Ֆերդ. Միւլգե
Մատակ. Նորին Մեծութ.
Ռուսաց Բարձր Դրան
ԿՕԼՆ Ռ. վ. ● ՌԻԳԱ
Հիմնված 1792 թ.

Ferd. Mülhens
Glockengasse Nr. 4711
Köln u. Riga
CHATIN
№ 4711 Nuss-Extract

(M. 529879/529905) 9—4

ԻՍԿԱԿԱՆ ԳՐՈՂ ՄԵՔԵՆԱՅ
փոխանակ 25 րուբլու, միայն 4 րուբլի 95 կոպ

ՎԵՐՋԻՆ
ՆՈՐՈՅԹ

ՀՐԱՇԱԼԻՔ
XX ԴԱՐԻ

Շնորհիւ տեխնիկայի զարգացման՝ աջողվել է կատարելագործել գրող մեքենայի կօնստրուկցիան այնպէս,
այբուբէն իմացողն իսկ կարող է նրանով գրել, ըստ որում բառերը երեւան են գալիս բոլորովին պա
եւ անսխալ։ Ով որ հէնց կը ստանայ «TAURU» մեքենան, անկասկած, յաւիտեան ինձանից շնորհակալ
մնայ։ «TAURU»-ն անհրաժեշտ է իւրաքանչիւրին։ «TAURU»-ն գրում է բլանկներ և այլն։ Խնդրում եմ մ
նային վերաբերվել լուրջ կերպով, որպէս իսկական գործնական և օգտակար մի առարկայի։ Եթէ մեքենան
չը գայ՝ փողերը վերադարձնում եմ։ Պատուէր ուղարկելուց խնդրում եմ յայտնել, թէ ո՛ր լեզուով է
հանձնվում մեքենան։ Գինը միայն 4 ր. 95 կ.։ Ճանապարհածախսը 40 կ.։ (Սիբիր՝ 75 կ.)։ Ուղարկում եմ
բաղիր վճարով։ Հասցէագրել՝ И. ШТРУМФЕЛЬДЪ, ВАРШАВА, Электоральная № 13, отд. 10.

(մ. 4) (Вил. 11139) 2—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
„ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ 10-րդ տպագրութիւնը, բոլոր յայտնի գործածակ
երգերով և բանաստեղծութիւններով, բաղկացած 344 մեծադիր էջերից։ Գինն է՝ ճան
պարհածախսով՝ 1 ր. 20 կ.։ Ցանկացողները, յայտնելով իրանց ճիշդ և պարզ հասցէ
դիմում են Բագու, «Սոխակի» հրատարակչին, հետևեալ հասցէով. Протоіерею Григорі
Григоріанцъ, Баку, Церковная, 96. Հրատարակիչը վերադիր վճարով գրքեր չէ ուղարկում

(օ.մ.) 135. 3—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный